Խնձորենին ծառ է, իսկ վարդմնին թուփ է : — Անառնուխը խոտ է, իսկ սիսեռը . . . ցորենը . . . ստեղղինը . . . կաղնին . . . մորենին . . . լուբիան . . . գարին . . . ընկուզենին . . . ճակնդեղը . . . սամիթը . . . բրինձը . . . կաղամբը . . . կեռասը . . . մոշին . . . առւոյտը . . . թրժնջուկը . . . կոտեմը . . . կորեկը . . . վարունդը . . .

ՀԱԻԲ ԵՒ ՎԱՐԵՇԱԿՆԵՐԸ

Հաւն առաւ իւր ձագերը և գնաց զբօսնուլ դաշտը : Պտտելու ժամանակ մայրը տեսաւ որ Ուրուրը կը թռչի երկինքը և կը նայի վառեակներուն : Մայրը կանչեց, ձագերը իմայցան որ վտանգ կայ, վազեցին մտան իրենց մօր թեւերուն տակ : Ուրուրը երկար տեսն դարձաւ ու դարձաւ և այլ ևս վառեակ չ' տեսնելով՝ հեռացաւ գնաց : Հաւը բացաւ իւր թեւերը, վառեակները նորէն սկսան վազվել խաղալ : Անցաւ մի քանի րոպէ, սրատես Ուրուրը հեռուանց կրկին տեսաւ ձագերը և սկսաւ անոնց վրայ խոյանալ : Բայց Հաւն ալ քնացած չ' էր . նա կրկին իւր քով կանչեց բարձրաձայն

իւր ձագուկները : Վառեակներէն շատերը վազեցին մտան նորէն իրենց մօր թեւի տակ, սակայն մէկ երկուքը ականջ չ' կախեցին իրենց մօր ձայնին՝ կարծելով թէ Ուրուրը չ' վասներ իրենց, այլ առաջուան պէս կ' անցնի կ' երթայ, բայց սխալեցան : Ցինը նետի պէս սլացաւ գետին և զանոնք ամէնքն ալ իւր ճանկերուն մէջ առաւ տարաւ : Աղատեցան միայն անոնք որք մատիկ ըրեր էին իրենց մօր խօսքը և անոր թեւերուն տակ մտեր :

ԱՂՈՒԵՄՆ ՈՒ ՃԱԳԱՐԸ

Խորամանկ Աղուէսը մօտեցաւ ձ' ագարին որջին ու կամացուկ ականջ տալով ըստ անոր : « Ճ' ագար, ինչո՞ւ այդպիսի խոր փոսի մէջ պահուըտնր ես, դուրս ել այդ մութ ծակէն ու պայծառ արեւու տակ ճարակիէ :

— Ենորհակալ եմ այդ բարի խորհուրդիդ, պատասխանեց ձ' ագարը . պիտի աշխատիմ կատարել զայն երբ դու հեռանաս այս տեղէն : Բայց քանի որ դու այս տեղ ես, որջ չ' եմ թողուր, որովհետեւ միտք չ' ունիմ քո նմանեաց հետ բարեկամութիւն հաստատելու :

Ա Ն Զ Ր Ե Ւ

Անձրեւ, անձրեւ, ցած արի,
Բըսցնը ցորեն ու գարի,
Բըսցնը ծաղիկ, կանաչ խոտ,
Աւլէ փոշի, մաքրէ՛ օդ :
Անձրեւ, անձրեւ, ցած արի,
Գալդ ամենուս բարի :



ՅՈՐԵՆ ԵՒ ԳԱՐԻ

Գիւղացին երկու օրավար հող ունէր : Միոյն մէջ ցորեն ցանեց, իսկ միւսին մէջ գարի : Արտերը աճեցան, բարձրացան, հասկեր ձգեցին : Օր մը Գարին սկսաւ խօսիլ . «Յորեն եղբայր, ըստ նա, մեր տէրը գէշ տեղ ցաներ է զմեզ . այս գիւղը շատ աղքատ է, ո՞չ ոսկի ունի, ո՞չ արծաթ : Ո՞վ պիտի ճանչնայ մեր յարգը եւ դին տայ մեզ : Արի, Յորեն եղբայր, հեռանանք այս գիւղէն . ելի՞ր երժանք այնտեղ ուր ոսկի շատ կայ : »

Յորենը լսեց իւր դրացւոյն խօսքերը և ըստ . « Եատ կը ցաւիմ, Գարի՛ եղբայր, որ միայն քիստդ երակարեր ես, իսկ խելքդ կարճ մնացեր է : Ինչո՞ւ շրջինք ոսկիին ետեւէն . մեր արծէքը այնքան մեծ է որ նա ինքն կուգայ մեր դուռը : »

8. Հանքեր

1. Թանկագին մետաղներ : — Ոսկի, բլաթին, արծաթ :
2. Հասարակ մետաղներ : — Երկաթ, պլղինձ, արծիճ, կլայեկ
3. Թանկագին քարեր : — Աղամանդ, զըմբուխտ, յակինթ
4. Հասարակ քարեր : — Որձաքար, չեչաքար, հերձաքար
5. Հողեր : — Բուսահող, աւազահող, կաւ
Առածներ : — Ապրիլ կայ՝ երկաթ է, ապրիլ կայ՝ արծաթ է : — Ոսկին փոքր է, բայց գինը մեծ է :
Հանելուկներ : — 1. Երկու եղբայր շատ փնտռուած, երկուսն ալ մէկ մօրէ ծնած . մեծի փոքր է պատին ու դին, փոքրը յարգի եւ թանկագին :
2. Կլորակ դեղին, աշխարհի սիրելին :
6. Ի՞նչ կ'ընէ վարժապետը : — Սշակե՞րտը . քահանա՞ն . հողագո՞րծը . վաճառակա՞նը . հովի՞ւը . որսո՞րդը . ձկնո՞րսը . բրո՞ւսը . քարտա՞շը . կօշակա՞րը . ձի՞ն . կո՞վը . կատո՞ւն . մեղո՞ւն . շո՞ւնը :
7. Ի՞նչ բան է ոսկին : — Երկաթը . որձաքա՞րը . աղամանդը . կա՞ւը . բլաթի՞նը . զմո՞ւսը . պատո՞ւսը . արծաթը . պլի՞նձը :



Գառնուկն և խր մայրը

(Մանկական երգ)

- « Ինչո՞ւ կուլսս , խեղճ Գառնիկ :
- Շատ ծեծ կերայ ես , մայրիկ :
- Քեզ ո՞վ ծեծեց , իմ Գառնիկ :
- Կախարդ պառաւ մէկ կընիկ :
- Ինչո՞ւ ծեծեց քեզ , Գառնիկ :
- Կայի ծառին տակ , մայրիկ :
- Ինչո՞վ ծեծեց քեզ , Գառնիկ :
- Մէկ մեծ փայտավ , իմ մայրիկ :
- Ո՞ր տեղ զարկաւ քեզ , Գառնիկ :
- Թաթիկներուս , իմ մայրիկ :
- Ի՞նչպէս բացիր դուն , Գառնիկ :
- « Մէ , մէ , մէ , մէ » , իմ մայրիկ :

Ոսկի ԵՒ ԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

Ոսկին և Երկաթը կը վիճէին իրարու հետ :
 — « Ես ամէնէն լաւ մետաղն եմ , կ'ըսէր Ոսկին .
 ամէնքը կը գովեն զիս , բոլոր աշխարհ զիս կը պատուէ
 և մարդ չը կայ որ իմ բարեկամութիւնս չը խնդրէ :
 Հարուստները ոչ միայն դրամի տեղ կը գործածեն զիս ,
 այլ և իրենց անձը կը զարդարեն ինձմէ շինուած շրջ-
 թաներով , մատնիներով և ուրիշ հաղարաւոր զար-
 դերով : Ի՞նչ որ սիրեն , նորա անունը ո՞չ կը դնեն .
 Տշմարիտ խօսքը զուտ ոսկի կը համարին . . . է՞ն , ալ
 յինչ Երկարեմ , ոսկւոյ պատիւն ու գինն այնքան մեծ
 է որ եթէ ուզեմ՝ կարող եմ բոլոր աշխարհ ոսկւով
 գնել :

— Հա հա , շատ կը պարծենաս , Ոսկի աղա , պա-
 տասխանեց Երկաթը , և իրաւունք ալ ունիս զի մար-
 դիկ շատ երես տուած են քեզ : Բայց այս ալ լաւ գիտ-
 նաս որ մինակ դու չ'ես աշխարհիս ակըրը . ապահով ,
 կուշտ ու հանդիստ ապրելու համար Երկաթն աւելի
 հարկաւորէ , ոսկիէ հրացաններով մարդիկ իրենց անձը
 չ'են պաշտպաներ գաղաններու և չարագործներու դէմ :
 Դու , պարոն ոսկի , ամէն բան կարող ես ընել . իսկ ես՝
 եթէ ուզեմ՝ կարող եմ բոլորը ձեռքէդ խլել :

9. Մարդ

Մարմնոյ անդամները : — Գլուխ , պա-
 լանց , բուն , ձեռքեր , ոտքեր :
 Գլխու մասերը : — Գագաթ , ծոծրակ , քոնք ,
 ձակատ , դէմիք :

Դէմքի մասերը : — Յօնք , աչք , քիլթ , այտեր , կզակ , բերան :

Առածներ : — Աստուած ձեռք է տուեր բան շինելու համար : — Բանի անունը որ տաս , գլխուց ցաւը կը բռնէ : — Մոլլ մարդու ձեռքերը միշտ փիլաւ կ'ուտեն : — Մարմնոյ ճրագը ակն է :

Հանելուկներ : — 1. Մէկը կանգնած կը խօսի , երկուքն ականջ կը դնեն , իսկ երկուքը կը նային : 2. Երկու սենեակ մի սիւնանի :

Արագախօսութիւն . — Փոկակապ Յակոբ ապեր , թէ կրնաս՝ մի փոկ կապես , ես քեզ կըսեմ՝ չնորհքդ շատ , փոկակապ Յակոբ ապեր :

Գլուխը մարմնոյ մասն է . իսկ գէմքը . . . — Աչքը գէմքի մասն է . իսկ ծոծրահը . . . բերանը . . . գագա՞թը . . . ձեռնի՞րը . . . յօնքե՞րը . . . բո՞ւնը . . .

Ի՞նչ մասեր ունի շան մարմինը . պատմեցէ՞՛ :
Ի՞նչ մասեր ունի հաւու մարմինը : Եղերիկի՞նը :

ՏՂԱՅՈՅ ԱԹՅՈՅԻՔ

— Հայր ամէն մարդու , Հայր մեր երկնաւոր ,
Բիւր բարիս կուտաս դու ինձ ամէն օր ,
Կեանք , լոյս և սնունդ , հայրիկ ու մայրիկ ,
Մեծ ու փոքր քոյլ , եղբայր անուշիկ ,
Բայց այսչափ բարեացդ ես ի՞նչ փոխարինեմ .
Ծնրադիր առջեւդ կեցած կազօթեմ .
Ծընորհք տուր ինծի որ ծնողներուս ,
Ուսուցիչներուս և իմ մեծերուս
Լինիմ սիրելի , քեզ միշտ 'ի հաճոյս :

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔ Է

Աքաղաղն ու Հաւը եղբայրացան : Աքաղաղը գնաց այգի և սկսաւ ուտել խակ պտուղներ , իսկ Հաւը կ'ըսէր անոր . «Մի ուտեր , եղբայր , սպասէ՛ որ հասուննան : » Աքաղաղը ականջ չ'դրաւ և այնքան կերաւ որ հազիւ կարող եղաւ տուն հասնիլ :

— «Վայ , քուրիկ , փորս կը ցաւի » , կ'ըսէր Աքաղաղը : Հաւը անոր անանուխի կաթիներ խմցուց , շաշուած մանանեխ վրան դրաւ և ցաւն անցաւ :

Աքաղաղն առողջացաւ և դաշտ գնաց : Այնտեղ նա շատ թռչտեցաւ ու վազվեց և բոլորովին քրտնած՝ մօտեցաւ աղբիւրին և կ'ուզէր պաղ պաղ ջուր խմել : Հաւը կը խրատէր զայն . «Մի ըներ , եղբայր , կ'ըսէր , սպասէ՛ , քիչ մը հանդիսաւ առ , յետոյ կը խմես : » Աքաղաղը մտիկ չ'ըրաւ , պաղ ջուրը խմեց և սկսաւ դողւթըալ : Մեծ գժուարութեամբ կարողացան տուն տանիլ զինքը : Հաւը վազեց բժիշկ բերելու : Բժիշկն եկաւ և նորա համար լեզի դեզ : Աքաղաղն երկար օրեր անկողնոյ ծառայեց :

Զմրան դէմ Աքաղաղն առողջացաւ և գնաց դետափը խաղալու : Գետի երեսը բարակ սառոյցով պատած էր : Նա ուզեց սահնակ խաղալ սառոյցին վրայ : Հաւը կը խրատէր զայն . «Մի ըներ , եղբայր , դեռ բարակ է , կը փշրի և կը խղդուխս : » Բայց Աքաղաղը չը լսեց և սկսաւ սահնակ խաղալ : Յանկարծ սառոյցը կոտրեցաւ և մեր անհնաղանդ Աքաղաղն ընկաւ ջոյն մէջ ու խեղդուեցաւ :

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՁՐ

Մ Ե Ղ Ո Ւ

Գարուն , ամառ , ամէն օր ,
Ես կը գնամ դաշտ ու ձոր .
Կ'աշխատիմ ես միշտ անվերջ ,
Մեղր փնտռեմ ծաղկանց մէջ ,
Եւ գտածս ես շիտակ
Իսկոյն կը տանիմ փեթակ ,
Որ երբ փչէ ցուրտ քամին ,
Ծաղկներն թառամին ,
Ես ձմեռը պաշարով
Վինիմ իսպառ ապահով :

Ճ Ա Ն Ճ

Փոքրիկ ճանձ մ'եմ զուարճասէր ,
Միշտ կը թռչիմ վայր ու վեր ,
Մի մեծ տան մէջ , մի բակին ,
Սաստիկ արեւուն տաքին :
Կեր ու խումէ , խաղէ ջոկ՝
Բնաւ չ'ունիմ ուրիշ հոգ՝
Եւ ներկայով բաւական ,
Միաք չ'եմ բերեր ուրիշ բան :

10. Զեռներու մասերը : — Դաստակ , ար-
մուկ , ուս :

Ուներու մասերը : — Աղիր , արունք , դար-
շապար :

Բնի մասերը : — Կուրծք , փոր , կողեր , թի-
կունք , մէջք :

Դաստակը ձեռքի մասն է , իսկ սրունքը

Կուրծքը բունի մասն է , իսկ բունքը

Սրունքը ոտքի մասն է , իսկ թիկունքը

Չեռքը մարմնոյ մասն է , իսկ գարշապարքը

Ուած . — Ով որ փքանայ , շուտով չքանայ :

ԵՐԿՈՒ ՀՈՎԻԻՆԵՐ

Երկու հովիւներ , Պետրոս ու Կարապետ , դաշտէն
միասին տուն կը դառնային : — « Գիտե՞ս , Պետրոս ,
ըստ ընկերը , եթէ քու ունեցած ոչխարներէդ մէկն
ինձ տաս՝ իմ հօտը քուկինէդ երեք անդամ շատ կը
լինի : — Ոչ , ըստ Պետրոս , դուն քու ոչխարներէդ
մէկն ինձ տուր , այն ժամանակ մենք հաւասար կ'ու-
նենանք : »

Հովիւներուն ամեն մէկը յանի՞ ոչխար ունէր :

ՈՒԼԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Մէկը կայ՝ մէկը չ'կայ , Այծ մը կայ եղեր . այս
Այծը իրեն համար անտառին մէջ տնակ մը կը շինէ և
իւր փոքրիկ ուկերով հոն կը բնակի : Ամէն օր նա դուրս
կ'ելնէ արածելու , միայն թէ երթալէն առաջ կը պա-
տուիրէ իր ձագերուն որ ով ալ դալու ըլլայ՝ դուռը չը
բանան . ինքն ալ արտերը կանաչ խոտերու մէջ արա-
ծելէ ետքը , երեկոյին ետ կը դառնայ տուն և իր եր-
կար կեռ կոտոշներով դրանը կը զարնէ ու կ'ըսէ .

Ի՞մ ուլիկներ, փոքր այծուկներ,
Դէհ շարժեցէք, դուռը բացէք.
Ոհա կուգամ կանանչ դաշտէն,
Ապշումէ խոտն արածած,
Պաղ աղբիւրի ջուրը խմած:
Կուրծքս լեցուն ես ձեզ համար
Ծիծերուս մէջ կաթ կը բերեմ.
Բացէք, բացէք, ձեզի կ'ըսեմ:

Ուկերը լսելով իրենց մօր ձայնը, կը վաղեն
կը բանան դուռը: Մայրը ծիծ կուտայ անոնց և կրկին
կ'երթայ արածելու:

Ոյս ամէնը տեսնելով կը լսէ Գայրը որ միտքը կը
դնէ խարէութեամք ներս մտնել ուկերու բնակարանն
և զանոնք ուտել: Օրին մէկը Ոյծը դուրս գնացեր էր,
Գայրը կամացուկ մը կը մօտենայ անոր փարախին ու
կ'ոկտի երգել, սակայն հաստ ու կոշտ ձայնով մը.

Ի՞մ ուլիկներ, փոքր այծուկներ,
Դէհ շարժեցէք, դուռը բացէք,
Զեր մայրն եկաւ, կաթը բերաւ . . .

Ուկերը քչիկ մը ականջ կը դնեն, կը նային որ իւ
րենց մայրը չ'է երգողը, կ'ըսեն. « Կը լսենք, այդ մեր
մօր ձայնը չ'է. մեր մայրը բարակ ձայնով ու քաղցրիկ
կը մկթայ », կ'ըսեն ու դուռը չ'են բանար: Գայրը անօ-
թութենէն ակուաները կրճաելով, կը թողու կ'երթայ:
Քիչ մը վերջը կուգայ նաև մայրը. նա կը դողիչ իւր
ձագերը որ իր խօսքը մտիկ ըրին ու դուռը չ'բացին.
— « Դուք շատ լաւ էք ըրեր, ձագուկներ, որ դուռը
չ'էք բացեր. թէ ոչ, նա ձեզ ամէնքդ ալ կ'ուտէր: »

« ՍՈՒՐԲ ԾԱՌ »

Ք Ր Ո Ջ Խ Ն Դ Ր Ո Ւ Ա Ծ Ք Ը

Ելնեմ ծառը զարդարեմ,
Վեր գամ տակը միսիթարեմ,
Հաւի վառեկը մորթեմ,
Տանիմ՝ գետը լուանամ,
Եփեմ ու չորանին տամ,
Չորանն ինձ մի ոչխար տայ,
Ոչխարն Աստուծոյ տամ,
Աստուած ինձ մէկ եղբայր տայ:
Եղբայր, եղբայր, ջան եղբայր,
Ջանը քեզ մատաղ, եղբայր:
Կարայ եմ կարել, կարճ է եկել.
Բուզմայ եմ շարել, խոչ է եկել.
Ճընճղուկի լեզուն մեղրով
Քեզ համար եմ տապակել:

Առած: — Քոյրն ըսաւ՝ եղբայր ունիմ, եղբայրն
ըսաւ՝ քոյր չ'ունիմ:

ԽՆԴԻՐ Ա.Ռ.Ա.ԿՈ.ԶԵՒԻ

Գիւղացին սայլով խոտ կը տանէր. սայլին մէջ կա-
յին նաև գայլ մը և գառնուկ մը: Նա հասաւ գետին
Եղերքը և երբ կ'ուզէր կամրջէն անցնիլ, պահապանն
առաջքն ելաւ ու ըսաւ. « Եթէ կ'ուզես որ թող տամ
առանց վարձքի կամրջէն անցնիս, սպայման մը կայ զոր
հարկ է կատարես. ուշ գիր որ ապրանքդ զատ զատ
անցունես — գայլը, գառնուկը և խոտը — , բայց այն-
պէս որ իրարու զսաս չ'հասցունեն: »

ի՞նչ ընէր գիւղացին . եթէ առաջ գայլը տանէր՝
գառնուկն անշուշտ կ'ուտէր խոտը , եթէ խոտը տա-
նէր՝ գայլը կը բզքտէր գառնուկը : Մտածեց , մտածեց
մեր գիւղացին և իւր ապրանքն այնպիսի հնարքով ան-
ցուց որ բնաւ մէկը միւսին չ'վխասեց :

Հիմա զիսցէ՛ֆ , զիւղացին ի՞նչպէս իւր ապրանքն
անցուց :

11. Աչքի , բերանի , դաստակի և գարշապարի մասերը :

Աչքի մասերը : — Բիթ , հիրիկ , սառնենի ,
կոպք , արտեւանունք :

Բերնի մասերը . — Եռլթ , ծնօտ , լինդ ,
ակույ , քիմք , լեզուակ , կոկորդ , չնշափող :

Դաստակի մասերը : — Մասներ , ափ , մատ-
նարմատներ :

Գարշապարի մասերը : — Պատուանդան ,
կրուկ , մատներ , ծիտք :

Առածներ : — Լեզուդ չուանի դիր : — Լե-
զուի տակը ոսկոր չ'կայ որ սուտ ըսես՝ ծակէ : — Սուտ
ըսողի տունը կրակ ընկաւ , ոչ ոք հաւատաց : — Օձի
կծածը կ'առողջանայ , լեզուի կծածը չ'առողջանար :

Հանելուկներ : — 1. Փոքրիկ պատուհան
շեղով լեփ լեցուն :

2. Չորս մայր կային նմանակ , ունէին հինդ հինդ
զաւակ , հինդն էլն մօր որդիք , հինդ՝ սոցա եղբօրոր-
դիք , տասն ալ՝ մօրեղբօրդիք :

ԵՐԿՈՒ ԵՒ ՄԻ

Ականջդ երկու , ունիս մի բերան ,
Հասկցիր դու լաւ ,

Աշխարհիս վրայ կը լսես շատ բան ,
Ու խօսէ սակաւ :

Աչքերդ երկու , ունիս մի բերան ,
Հասկցիր դու լաւ .

Աշխարհիս վրայ կը տեսնես շատ բան ,
Ու պատմէ սակաւ :

Երկու ձեռք ու մի բերան դու ունիս ,
Հասկցիր ի՞նչ լաւ .

Օրն ՚ի բուն ու շատ պիտի աշխատիս ,
Եւ ուտես սակաւ :

ԾՈՅԼԸ ԵՒ ԶԱՆԱՍՔՐԸ

— «Այսօր խաղամ , վաղը կը սովորիմ» , կ'ըսէ ծոյլը =
— «Վաղը կը խաղամ , հիմա սովորիմ» , կ'ըսէ չա-
նասէրը :

Ծոյլ աղջիկը : — «Բանն ի՞նչ անեմ , աղտոտ
է , բամպակը կորիզոտ է , մետաքս պիտի՝ որ մանեմ ,
մազտաք պիտի՝ որ ծամեմ , կտուրը տիտիկ անեմ ,
անցնողին մտիկ անեմ , ուտեմ խմեմ , մթնի քնեմ : »
Ծոյլ աղջան : — «Լաթերս հանէ , պառկեցնը ,
ծածկէ զիս ու խաչակնքէ վրաս , յետոյ ես ինքս կը
քնեմ : »

Աչքը զէմքի մասն է . իսկ բի՞օբը — Ափը ձեռքի
մասն է , իսկ դէ՞մքը — Գարշապարը ոտքի մասն է ,
մասն է , իսկ դէ՞մքը — Դէմքը զլսի մասն է , իսկ գը-
իսկ պատուանդանը — Միմքը զլսի մասն է , իսկ աչքը ակ-
լումը — Միածանն աչքի մասն է , իսկ աչքը ակ-

ռանե՞րը . . . կրո՞ւկը . . . ոսնե՞րը . . . ա՞զդրը . . . գաստա՞-
կը . . . ծնօտնե՞րը . . . — Մորենին թուփ է, իսկ կաղնին . . . :
— կուժը աման է, իսկ փիլա՞ւը . . . : — Շունը չորքոտանի
է, իսկ ձիօն . . . վա՞զրը . . . մածո՞ւնը . . . արօ՞րը . . . բաղ-
կաթո՞ուը . . . :

Մ Ե Ղ Ա Ւ

Հա ծագեցաւ արեգակը,
Հա ծաղկեցաւ մանուշակը,
Մեղուն թողեց իւր փեթակը,
Տըզոզալով-տըզոզալով :

Մեղուն թուաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղր առաւ քաղցր-անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ,
Պըզոզալով-պըզոզալով :

Անուշ մեղը մանր տղոց,
Դեղին մոմը ամէն Սրբոց,
Իսկ չարերուն կըճ ու խայթոց,
Կըսկըծալով-կըսկըծալով :

Ո Զ Խ Ա Ր

Աստուած կը տաքցնէ ոչխարները :

Դարնան վերջերը հովիւը լսուզեց եր ոչխարները:
Դեռ ցուրտ էր և խեղճ կենդանիները կը դողդողային :
Աստուած խղճաց ոչխարներուն վրայ և աշխարհ
ուղարկեց արեւու տաք ճառագայթիներն ու ջերմ քա-
մին : Ոչխարները տաքցան և ուրախ զուարթ վազեցին
դէպ ՚ի դաշտը, իսկ աշնան դէմ անոնց բուրդը նորէն
բուսաւ ու թաւացաւ :

Ի՞նչ շինեցին ոչխարի բրդէն .

Մանկունք ամառն ՚ի բուն ուրախ զուարթ կը խա-
ղային : Զմեռն եկաւ և նոքա չ'էին կրնար առաջուան
պէս դուրս վազել : Տրտում նստած էին իրենց լուսա-
մուտներու առաջ ու կը նայէին դուրս ուր ձիւնը բարդ-
բարդ դիզուած էր : Մայրը գնեց ոչխարի բուրդ, թել
մանեց և փափուկ գուլպաներ ու թաթպաններ հիւ-
սեց իւր որդւոց համար . յետոյ շալ դործեց և նոցա
համար հագուստներ կարեց : Այսուհետեւ մանուկները
ամուր հագուստ ըլլալով, համարձակ դուրս ելան և ու-
րախ զուարթ սկսան ձիւնագնդակ խաղալ :

Կը զրեն զրչով . կը կարեն . . . կը կարդան . . . կը վա-
րեն . . . ժուռ կուգան . . . կը կամինեն . . . : — Արօրով կը
վարեն, իսկ մատիտով . . . : — Հացը կուտեն, իսկ կաթը
. . . : — Մեղանը փայտէ կը հնան, իսկ սոնը . . . : —
Հացը կը թխեն ալիւրէ, իսկ գինին կը քամն . . . :

12. Հինգ զգ այտանիք

Աչքով կը բեռնեն + առարկայն . ականջով կը լսեն+ նու-
րա ձայնը . քթով նորա հորը հարանան +, լեզուով՝ համը,
իսկ մատներով կը բարձրէն + և կիմանանք նորա պնդու-
թիւնը, փափկութիւնը, թանձրութիւնը, բարակու-
թիւնը, պաղութիւնը, տաքութիւնը, հարթութիւնը,
անհարթութիւնը . . . :

Տեսունեան գործարանն աչքն է . լսով-նեա՞ն գործարանը
... հորատունեա՞ն գործարանը . . . շշահման գործարանը . . .
քաշէն գործարանը . . . :

Առածներ : — Ականջն անոր համար չի մեծ-
նար որ շատ բաներ չը լսէ :

Անհանձար մարդու լեզուն երկար կը լինի :
Ուրիշ աչքը քեզ համար լցու չի տար :

Հանելուկ : — Փետրով կը ցանեն,
Աչքով կը քաղեն,
Գլխով կ'ուտեն,
Մաքով կը մարսեն :

Խրատ : — Մի խնդրէր Աստուծմէ
Ոչ փող, ոչ պատիւ,
Այլ քեզ կրթելու
Խելք, չնորհք, սիրտ ազնիւ :
Երբէք մի պարծիր
Թէ շատ գիտուն ես,
Որքան բան սովորիս՝
Այն օգուտ է քեզ :
Օգնող եղիր քո ընկերաց,
Աղքատներու սէր ցուցո՞ւր .
Մեր Տէրն ըստ թէ չ'է անվարձ
Նաեւ բաժակ մի ցուրտ ջուր :

ԿԱՂՆ ՈՒ ԿՈՅՐԸ

Կաղն ու Կոյրը սրբնթաց առուակէ մը պիտի անց-
նէին : Ի՞նչպէս ընէին : Կոյրը շալկեց Կաղը և Երկուքն-
ալ ապահով անցան առուակէն :

Ա. Ռ. Ա. Խ Օ Տ

Փալփլուն ճաճանչով արեւելք լցաւ,
Գետի մօտ գիւղի կրակ մարեցաւ.
Դաշտի ծաղիկներ ցօղով ցօղուեցան,
Դուար ու ոչխար արօրը ելան :
Թանձր մառախուղք երկրէն հեռացան,
Ամէն կենդանիք դաշտը լցուեցան .
Արթնցան մարդիկ, սկսան գործի,
Ծագեց արեգակն, աշխարհ կը բերկրի :

Կաղնին ծառ է, իսկ մասրին թուփ է : — Զին չորքո-
տանի կենդանի է, իսկ ծիծեռնա՞կը — Բահը գործիք է .
իսկ բազկաթո՞ուր — Գնդակը խաղալիք է . իսկ փիլա՞ուր
. . . . — Քանոնը դասական առարկայ է, իսկ մո՞ւրճը —
Բաղը թռչուն է, իսկ օձը — Կաղամբը բանջարանոցի
բոյս է, իսկ ցորե՞ուր — Առույաը խոտ է, իսկ սիսե՞ուր
. . . . — Երկաթը մետաղ է, իսկ բզէ՞զը — Առիւծը վայրի
գաղան է, իսկ ուղարքը — Տառեիսը ձուկ է, իսկ գո՞րտը
. . . . աղուէ՞ուր խո՞զը . . . գարի՞ն . . . բաժա՞կը . . . տիկի՞նը
. . . սեղա՞նը . . . :

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՃԲ

Ճանճերը գոհ չ'էին իրենց կեցած տեղէն, Նոքա-
խորհեցան որ ուրիշ երկիր երթան, բայց չ'էին ուղեր
մինակ երթալ . ուստի իրենցմէ մէկը Մեղունին զրկեցին
որ նա ալ գայ :

— «Մեղու եղբայր, ըստ Ճանճը, չար մարդիկ
հանդիսաւ չ'են թողուր զմեղ այս տեղ : Հերիք չ'է որ
ամէն բան կը պահեն մեզմէ, պատոհաններուն մէջն ալ
թոյն կը դնեն որ ուտենք ու մեռնինք : Ստոյգ է թէ

խրճիթներու մէջ չ'են նեղեր զմեղ մարդիկ, բայց այնա-
տեղ ալ ուրիշ թշնամի ունինք։ Սարդերը իրենց ոս-
տայններուն մէջ կը բռնեն զմեղ, կը խեղդեն և կը
ծծեն մեր արինը։ Արի, Մեղու եղբայր, երթանք
հեռանանկը այս տեղէն»։

Մեղոն լսեց ու պատասխան տուաւ. «Դուք գա-
ցէք ո՛ւր որ կ'ուզէք. ես ձեր ընկերը չ'եմ։ Ինձ հա-
մար հոս ալ շատ լսաւ է. ամէնքը կը պատուեն զիս ու
կը սիրեն, ես ալ ամենուն օգտակար կը լինիմ. իմ
մեղրս թէ չար և թէ բարի մարդոց, աղքատին ու
հարուստին քիմքը կը քաղցրացնէ։ Իմ տուած մոմը
Աստուծոյ տաճարը կը լուսաւորէ։ Դուք գացէք ուր
որ կ'ուզէք, միայն գիտնաք որ ամէն տեղ ալ պիտի
հալածեն զձեղ, որովհետև ոչ միայն օգտակար չ'էք
մէկուն, այլ կը ձանձրացնէք ամէնքը»։

ՈՐԲԸ ՊԱՀՈՂՆ ԱՍՏ ԻՒԱԾ Է

Փայլուն արեւն արդէն մայր մտաւ,
Լուսինն ալ շատոնց գնաց, պահուեցաւ,
Փոքրիկ աստղերը ամպի տակ մտան
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան։
Ամէն մարդ գնաց, իւր տունը նստաւ,
Ամէն երախայ մօր գիրկը մտաւ.
Միայն խեղճ որբը չ'ունի հայր ու մայր,
Չ'ունի բարեկամ, ոչ քոյր, ոչ եղբայր,
Անտէր մնացած՝ Աստուծոյ կամքին,
Խեղճը կը ննջէ փողոցի միջին։

13. Մարդիկ, կենդանիներ, բոյսեր, Հանքեր։

Մարդիկ։ — Հայր, մայր, եղբայր, քոյր, հօ-
րեղբայր, քեռի, հօրաքոյր, մօրաքոյր, ծերունի, պա-
ռաւ, մանուկ, տղայ, աղջիկ, կին, վաճառական, աղ-
քատ ։ ։ ։

Կենդանիներ։ — Գազաններ, թռչուններ, ձըկ-
ներ, սողուններ, միջատներ, խեցգետիններ, սարդեր։

Բոյսեր։ — Ծառեր, թփեր, ընդեղէններ, խո-
տեր, բանջարեղէններ, տունկեր, մամուռներ։

Հանքեր։ — Մետաղներ, քարեր, հողեր, աղեր։

Առածներ։ — Ինչ չ'ծնիր, նա չի մեռնիր։

Հանելուկ։ — Ի՞նչ բան է այն որ առաւօտուն
չորս ոտքի վրայ, կէս օրին՝ երկու, իսկ երեկոյին երեք
ոտքի վրայ կը քալէ։

Արագախօսութիւն։ — Ծիտը ճմբան ծէրին,
Ճտի ճուտի ճիտը ճուռ։

Աղքատը մարդ է ։ ։ ։ Թռուփը ։ ։ ։ Թռչունը ։ ։ ։ Գիր-
քը ։ ։ ։ Սահուկը ։ ։ ։ Երկաթը ։ ։ ։ Եղքը ։ ։ ։ Սահուկը ։ ։ ։ Գազանը ։ ։ ։
Բայցը ։ ։ ։ Ծառը ։ ։ ։ Սամուռը ։ ։ ։ Սունկը ։ ։ ։ Գազանը ։ ։ ։
Այլը ։ ։ ։ Աղքը ։ ։ ։ Հայրը ։ ։ ։ Օրինորդը ։ ։ ։ Մետաղը ։ ։ ։
զանը ։ ։ ։ Հողը ։ ։ ։ Միջատը ։ ։ ։

Պ Ս Ա Կ Ն Ե Ր

ՇՈՒՇԱՆՔ ՊՍԱԿ


ՎԱՐԴԻՔ ՊՍԱԿ

Անմեղութեան օրինակ , Վարդի լինիմք մենք նման ,
Դաշտի շուշան սիրունակ , Որ է պատկեր հեղութեան .
Ե՛կ , զարդ եղիք մեր պարին , Հանգչի կոկոն թող վարդի
Ե՛կ , միացիր մեր երդին : Վերայ մատաղ մեր սրտի :
Լա , լա , լա , ևայն :

ԿԱՂՆԵԱՅ ՊՍԱԿ

ՄԱՆՈՒՇԱԿԻ ՊՍԱԿ

Խոտըն դալար դաշտերուն Աղնիւ սիրուն մանուշակ ,
Սիրելի է մեր սրտին . Համեստութեան օրինակ ,
Թող գեղեցիկ ոստ կաղնոյն Տնոր մեղ ծաղիկ գեղեցիկ
Պասկ լինի մեր գլխին : Եւ հոտ քնքոյշ անուշիկ :
Լա , լա , լա , ևայն :



Ա. Ր Զ Ի Ն Թ Ա Թ Բ

Գեղացիք թակարդ լարեցին և Արջ մը բռնեցին :

Չուղեցին Արջը սպաննել , միայն կացինով նորա թաթը
կտրեցին : Եռոտն Արջն ալ կաղալով խեղալով փախաւ
գնայ : Խեղճ Պառաւ մը խնդրեց որ Արջի թաթն իրեն
տան , խուզեց նորա վրայի մազը և կաշին ալ մաշկեց :
Պառաւը միաը կրակին վրայ դրաւ եփելու , ինքն ալ նըս-
տաւ կաշին վրայ և սկսաւ մանել նորա մազը : Մանեց
մանեց մինչև կես գիշեր : Կէս գիշերին մէկ մ'ալ տես-
նես ձայն մը կը լսուի , լուսամուտին մօտ բան մը
թըմբ-թըմբ , թըմբ-թըմբ կ'ընէ :

Պառաւը ականջ դրաւ լուսամուտին և վախէն քար
դարձաւ . տեսաւ որ եռոտանի Արջը փայտի մը վրայ
կը թնելով կը բարձրանայ և քթին տակէն սա խօսքերը
կը մըմթմըմթայ .

«Օ՞ն բարձանամ , բարձրանամ , ննջէ ամէն մարդ ՚ի շէն ,
Լորի ոստի օգնութեամբ , ննջէ ՚ի գիւղ մարդ ամէն .
Հունի փայտի օգնութեամբ . Միայն Պառաւ չ' քնած ,
Բոլոր աշխարհ կայ ՚ի քուն իմ կաշին ոտքը փուած ,
Կեցան հոսանք ջրերուն : Իմ բրդէն թել կը մանէ ,
Իմ մսէն սնունդը կ'եփէ » :

Պառաւը շատ վախցաւ , որովհետեւ նա գիւղի մէկ
ծայրը կը բնակէր միայնակ : Հիմա ի՞նչ ընէ , ի՞նչ չ'ընէ ,
Արջէն ի՞նչպէս աղատի : Արջը քիչ էր մնացեր որ ներս
մտնէ . նա արդէն ձեռնափայտով կը թըմբ-թըմբսկացնէր
դրսէն : Պառաւը թոնիրի բերանը բացաւ և ինքը դնաց
ելաւ ամբարի դլումը :

Արջը տըմբարփելով դուռը գտաւ և կոնըկի վրայ
բանալով ներս մտաւ խրճիթը և սկսաւ մութին մէջ աս-
դին անդին խարխափելով ժուռ գալ . մէկ մ'ալ
տեսնես — տըմբմի — ընկաւ թոնիրը :

Պառաւը շուտով ամբարի գլխէն վար թռաւ,
ծածկեց թռնիրի բերանը և գնաց դրացիներուն ձայն
տուաւ։ Դրացիներն եկան և Արջը սպաննեցին։

**14. Օրուան մասերը, շաբթուան օրերը,
տարուան եղանակները։**

Օրուան մասերը։ — Ցերեկ, գիշեր, առաւոտ,
կէս օր, երեկոյ, կէս գիշեր։

Շաբթուան մասերը։ — Կիւրակէ, երկուշրթի, երեքշրթի, չորեքշրթի, հինգշրթի, ուրբաթ, շաբաթ։

Տարուան եղանակները։ — Գարուն, ամառ,
աշուն, ձմեռ։

Առածներ։ — Վեց օր աշխատէ՛, եօթներորդ
օրը հանդչէ՛։

Հանելուկ։ — Մի մանուկ կար զօրեղ հրեղէն,
խմեց հատցուց ջուրը գետէն. բոլոր մարդկան ըրաւ
նա քէն, հնձեց վերցուց խոտը դաշտէն։

Գարունը տարուան եղանակն է. Ցերեկը. կիւրակէն.
ամառը. երկուշրթին. գիշերը. չորեքշրթին. առաւոտը.
երեքշրթին. աշունը. ուրբաթը։ — Օրը ժամանակի չափ է.
շաբաթը շաբթուան վերջին օրն է. ձմեռը . . .



Կ Ի Ր Ա Կ Ն Ա Մ Ո Ւ Տ

Իրիկուան պահու զանդակը զարկին,
Բարեպաշտ մարդիկ ժամ հրաւիրեցին.
Վաղը կիրակի Աստուծոյ օրն է,
Ժամ է հանգստեան, դադրեցէք գործէ։
Լսեց գիւղացին դաշտի մէջ զայս ձայն,
Դէպի տուն քշեց եղն իւր ու Գութան։
Գիւղային փոքրիկ պարզ եկեղեցին՝
Լցուած բազմութիւնն աղօթքի էին,
Քրտինքի գնով գնած մոմերնին
Սուրբերու առաջ մեղմիկ վառէին։

Ե՞րբ կը լինի

Զինը կը հալի, խոտը կը ծլի, ծառը կը ծաղկի,
օրը կ'երկարի։ Այս երբ կը լինի։
Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին։ Օրը կար-
ճացաւ, հունձքը վերջացաւ։ Բարակ անձրեւը վերէն կը
թափի, իսկ մութ գիշերը չորս կողմու պատէ։ Այս երբ
կը լինի։

Դաշտ ու ձոր ահա ձիւնով ծածկուեցան։ ծառե-
րէն սառի շիթեր կախուեցան։ Մարդիկ ներս մտան
իրենց աները, իսկ գաղանները՝ իրենց որջերը։ Դուրսը
սաստկութեամբ քամի կը փչէ և ձիան փոշով աչքերդ-
կը լեցնէ։

Ինձ ըսէք, տեսնեմ, այս երբ կը լինի։

1. — Զմեռ էր, գետը ծածկուած էր սառոյցով։ Գարեգին իւր ընկերներուն հետ կ'զբօսնուր և հաստ սառուցի վրայ սահնակով սահուկ կը խաղար։ Բաւական խաղալէ յետոյ՝ ուրախ զուարթ տուն վազեց և ըստ իւր հօրը։ «Ախ, հայրիկ, ի՞նչ պատուական եղանակ է ձմեռը, ի՞նչպէս կ'զբօսնունք։ ձիւնագնդակ կը խաղանք, կը սահնք սառուցի վրայ . . . Ախ, երանի թէ միշտ ձմեռ ըլլար։» Հայրը հանեց ծոցի տետրակը և ըստ։ «Գրէ սորա մէջ քո փափաքը։» Գարեգին դրեց։

2. — Զմեռն անցաւ, գարունը եկաւ։ Ծլեցան ծաղիկները, բարձրացան գաշտերու խոտերը, այստեղ այնտեղ կ'ոստոստէին հազարաւոր թիթեռներ ու բզէզներ։ Գարեգին գաշտը գնաց, ծաղիկներ քաղեց, թիթեռներ քոնեց ու երբ երեկոյին տուն եկաւ՝ ըստ հօրը։ «Գիտնայիր, հայրիկ, թէ զգան զուարճացայ ես այսօր։ ճշշմարիտ, շատ հիանալի եղանակ է գարունը և եթէ ինձ մնար՝ կը փափաքէի որ միշտ գարուն ըլլայ։» Հայրը հանեց տետրակն և առաջարկեց Գարեգինին որ իր իղձը գրէ հոն։ Գարեգին դրեց։

3. — Ամառ եղաւ, գաշտերու խոտերը հասեր էին և հնձող կը կանչէին։ Գարեգին ու իր հայրը գնացին խոտ հնձեռու։ Մինչդեռ հայրն անուշահոտ խոտերը կը հաւաքէր, Գարեգին ալ իր զբօսնաց կ'զբազէր։ ձուկ կը բռնէր գետակէն, մորմենի կը քաղէր, հոտաւէտ խոտերու վրայ կը թաւալէր։ Երեկոյին որ տուն դարձան, ըստ իր հօրը։ «Այսօր ես որչափ ուրախացայ։» Երանի թէ ամառը վերջ չ'ունենար։» Գարեգինի այս իղձն ալ գրուեցաւ տետրակին մէջ։

4. — Վերջապէս եկաւ Աշունն ալ։ Այդեստանեաց

մէջ կլորիկ մլորիկ պտուղները հասեր էին՝ խնձորը, տամնձը, սալորը, սերկելիլ, խաղողը . . . Մարդիկ ելած էին այգեկութիւն, Գարեգին ալ իր ծնողաց հետ գնաց այգին և քաղն սկսաւ։ Տեսնելու էր թէ ի՞նչպէս կը փազվըզէր նա մէկ ծառէն միւսը. կը խնդար, կերպէր, կը խաղար և միշտ ձմեռէն միւսնը անուշ կ'ընէր։ Վերջը և պտուղներէն բերանը նետելով՝ անուշ կ'ընէր։ Վերջը նա վազեց իւր հօր քով և նորա ճիտը փաթթուելով՝ կ'ըսէր։ «Հայրիկ, աշունը տարւոյն ամենէն լաւ եղանակն է անտարակոյս։»

Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակն և ցուցուց թէ նա միւնոյն բանն էր ըստ գարնան, ձըմեռուան և ամառուան համար։

Պատմեցէ՛ այս պատմութիւննը, ըսէ՛ք թէ յանի՞ գլխաւոր կտորներու կարող էր բաժնել զայն. ի՞նչ է ըստած իւրաքանչյուր կտորի մէջ։

ՆՈՐ ՏԱՐԻ

Ահա եկաւ նոր տարի,
Հետը բերաւ նոր բարի,
Մանր տղոց՝ ուրախ օր,
Բարի զաւակ՝ հօր ու մօր։
Մանըր տղայքն են ուրախ,
Ունին կազին, կօզինախ,
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փըշատ, յունապ և ընկուզ։
Մանըր տղայք, մը մոռնաք,
Աշխարհի մէջ չ'էք մինակ,
Ուրիշ շատ խեղճ տղայք կան,
Աղքատ և անօդնական։

Նոքա հայր ու մայր չ'ունին,
Կարօտ են սև չոր հացին,
«Աղքատներու ողորմած
Եղէք», կ'ըսէ ձեզ Ասսուած։

15. Ամիսներ

Ամիսներ։ — Յունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր։

Զմեռնային ամիսներ։ — Դեկտեմբեր, յունվար, փետրվար։

Ամառնային ամիսներ։ — Յունիս, յուլիս, օգոստոս։

Աշնանային ամիսներ։ — Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր։

Գարնանային ամիսներ։ — Մարտ, ապրիլ, մայիս։

Յունվար ձմեռնային ամիս է. իսկ մայիսը . . . — Սեպտեմբեր աշնանային ամիս է, իսկ փետրվարը . . . — Մարտ գարնանային ամիս է, իսկ յունիսը . . . — Յուլիս ամառնային ամիս է, իսկ սեպտեմբերը . . . ապրիլը . . . օգոստոսը . . . դեկտեմբերը . . .

Տարին յանի՞ ամիս ունի։ Ո՞ն է առաջին ամիսն։ Ո՞ն է վերջինը։ Ո՞րն է են զարնանային ամիսները։ Բայց ամառնային ամիսները։ Ո՞րն է աշնանային վերջին ամիսը։ դա ո՞ր եղանակին ամիսն է։ յանի՞ երրորդն է . . .

Առաջնային ամիսն ամառնային ամիսն է։

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

Արեւն իր ոյժը կորուսած՝
Ամպերու տակ պահութեցաւ.
Սաստիկ քամին ծառեր ամէն
Տերեւաթափ և մերկ ըրաւ։
Երկինքի մէջ ամպի գէղեր
Անձրեւները կը պատրաստեն,
Անտառներն աղ տերեւներով՝
Առուն ախուր կը կարկաջեն։
Շատ թռչուններ ու թիթեռներ
Անյայտացան մեր գաշտերէն։
Ծառը չ'անի կանանչ տերեւ,
Նա զրկուած է իր զարդէն։
Խնչո՞ւ դաշտաց ալ սողուններ
Եւ վայրենի մեծ թռչուններ
Կ'աճապարեն իրենց համար
Մէկ մէկ ապահով տեղ գտնել։

Աչքը եւ քիթը գէմքի մասերն են, իսկ ա՞զիը եւ սըրո՞ւնքը . . . — Դաստակը եւ արմուկը ձեռքի մասերն են, իսկ կո՞ւրծքը եւ փո՞րը . . . — Գլուխը եւ պարանոցը մարմնոյ մասերն են, իսկ սպիտակո՞ւցը եւ ծիածա՞նը . . . — Բիբը եւ արտեւանունքը աչքի մասերն են, ակռաներն լեզո՞ւն . . . — Մարտ եւ ապրիլ գարնանային ամիսներն են, իսկ սեպտեմբերն ու նոյեմբերն ու դեկտեմբերն ու յուլիս ամառնային ամիսներն են, իսկ յունվա՞րն ու փետրվա՞րը . . .

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Ծեր Օհան դաշտ ելաւ. քանի կը շարժէր թեւելը, անոնցմէ թռչուններ թող կուտար։ Օհան շարժեց չորս անդամ և դուրս արձակեց ընդամէնը տասներկու

թռչուն։ Երբ թռան գային առաջին երեքն՝ ցուրտն սկսաւ, գետերը սառեցան, մարդիկ մսեցան։ — Երբ թռան երկրորդ երեքը՝ ձիւնը հալեցաւ, խոտը՝ կանաչացաւ, գետերը բարձլ ացան, ծառերը ծաղկեցան։ — Երբ գուրս թռան միւս երեքը՝ եղանակը տաքցաւ, տաք օրերն եկան, արտերն ու պտուղները հասան։ Իսկ երբ գուրս թռան մնացած երեքը՝ փշեց պաղ քամին, սկսան անձրեւներն ու մառախուղները։ — Ծերունոյն թռչունները հասարակ տեսակէ չ'էին։ անոնցմէ ամէն մէկն ունէր չորս թեւեր, ամէն մէկ թեւի վրայ՝ եօմը փետուր, իսկ փետուրներու մէկ կողմը սեւ էր, միւրը ճերմակ։ Ամէն մէկ թռչուն, ամէն մի թեւ և ամէն փետուր իր անունն ունէր։

Ի՞նչ կը պատահի ամրան օդին գետերուն, դաշերուն եւ անտառներուն մէջ։

Ի՞նչ կը պատահի աշնան

Ի՞նչ կը պատահի ձմրան

Ի՞նչ կը պատահի գարնան

Ս Ե Պ Ո Ւ Ն Ե Ր

Գարունն հասաւ, արեգակը հալեցուց դաշտերու ձիւնը, հին ու դեղնած խոտերու մօտ ծլեցան դուրս եկան նորանոր կանաչ բողբոշներ, ծառերու ծիլք ծաղկեցան և փորբիկ տերեւներ յառաջ բերին։

Ահա մեղուն ալ արթնցաւ իր ձմեռնային քնէն, սրբեց աչքերը իր բրդու թաթիկներով, արթնցուց ընկելները և միասին դուրս նայեցան լուսամուտէն որ տեսնեն թէ ձիւնը, սառոյցն ու հիւսիսային պաղ քամին անցել են։

Մեղուները կը տեսնեն որ արեգակը կը փայլի,

ամէն տեղ տաք է և լոյս։ նոքա իրենց փեթակներէն դուրս կ'ելնեն և կը թռչին դէպ ՚ի Ծիրանի ծառը։

« Սիրոնն Ծիրանի, բան մը չ'ունիս արդեօք խեղճ Մեղուներուս համար։ մենք ամբողջ ձմեռ անօթի ենք մնացած։ »


— Ոչ, ոչ, կը պատասխանէ Ծիրանի ծառը։ իմ ծաղիկներս աակաւին պահուած են կոկոններուն մէջ։ Գնացէ՛ք նշենիին հարցուցէք։ »

Մեղուները թռան գնացին նշենիին քով։ « Սիրելի նշենի, արդեօք քչիկ մը բան չ'ունիս սոված Մեղուներուս համար։ »

— Վաղը եկէք, խնդրեմ, կը պատասխանէ նոցա նշենին։ այսօր իմ վրայ և ոչ մէկ բացուած ծաղիկ կայ։ Երբ ծաղիկներս բոլոր բացուին, ես մեծ ուրախութեամբ կ'ընդունիմ զձեզ։ »

Թռան մեղուները կակաչի մօտ, նայեցան նորա փայլուն գլխուն, բայց նա ալ ոչ հոտ ունէր և ոչ մեղը։

Մեղուները տրտում և անօթի կ'ուզէին ետ դառնալ տուն, բայց տեսան թփի տակ քնքոյշ մութ կաշալ պոյտ ծաղիկ մը։ Մանուշակն էր։ նա բացաւ Մեղուն պոյտ ծաղիկ մը։ Մանուշակն էր։ նա բացաւ Մեղուն համար իր կոկոնները որոնք լեցուն էին անուշ հոտով ու քաղցր հիւթով։ ձաշակեցին Մեղուները և ուրախ զուարթ դարձան տուն։



16. Տօներ

Աստուածամօր Ծնունդը : Ուետումն : «Քրիստոսի Ծնունդը : Մկրտութիւն : Տեառնընդառաջ : Ծաղկազարդ կամ Քրիստոսի Գալուստը : Զատիկ կամ Սուրբ Յարովթիւն : Համբարձումն : Հոգեգալուստ : Վարդավառ : Վերափոխումն Ս. Աստուածածնի : Խաչվերաց . . . :

Առածներ : — Աղքատն ունի հաց ու պանիր, գիշերը քոնը չի տանիր : — Դարբինին դանակ չը լինիր, ջուշակին՝ պատան : — Երախային ըսին՝ ինչո՞ւ կուլսու, պատասխանեց՝ խօսքս միշտ կ'անցնի, անոր համար :

Հանելուկ : — Երեք ոտքէն, մէկ մօրուքէն, կայնէր կ'ուտէ մեր հօր քէսէն :

Վ.Ա.ԽՈՏ ՅՈՎՀԱՆՆԵՍ

Յովհաննէսի մայրը դաշտին մէջ խաշ հնձեց և դրաւ վառարանի վրայ որ քացիի, իսկ ինքն դրացւոյն տունը գնաց :

Յովհաննէս մթուն տուն դարձաւ, կանչեց, ձայն տուաւ, — մարդ չկար : Յետոյ նա ուզեց կրակ վառել, բայց երբ վառարանին մօտեցաւ, պճպճալու ձայն մը լսեց . «Կ'երեկ թէ մենէ աղէկներէն է», մտածեց Յովհաննէս և վախէն սկսաւ փախչիլ : Դիպուածով ունելիքն ոտքին դիպելով՝ երեսին վրայ վար ինկաւ և ունելիքին ծայրը ճակտին զարնուեցաւ . «Վայ, մայրիկ, վայ, օդնութեան հասէք», պոռաց Յովհաննէս և

կ'ուզէր տնէն դուրս փախչիլ . բայց դուրս փազելու ատեն արեխին ծուպը դրան տակ մնաց և Յովհաննէս փոռեցաւ սեմին վրայ և ողբական ձայնով կը պոռար . «Վայ, մայրիկ, վայ, օդնութիւն, աղատեցէք, քաշերը զիս բռներ՝ թող չ'են տար :

Այս աղաղակները լսեցին դրացիները, եկան վերուցին կիսակենդան Յովհաննէսը, բայց երբ գործին էութիւնն իմացան՝ սկսան նորա վրայ խնդալ :

Հ Բ Ա Խ Է Ր

Եկէք, բարեկամք, եկէք,
Արագ արագ վազեցէք.
Դասի սեղանն պատրաստուած,
Դասագրքերն են բերուած:
Ժամանակ է, վազեցէք,
Եկէք, բարեկամք, եկէք :





ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

(ՈՐԴԻՆ)

Հայրիկ, կը խնդրեմ,
Ըսէ ինձ, տեսնեմ,
Խչու ամէն օր
Եղբայրս Դրիգոր

Կանովսկեկ կ'ելլայ,
Եւ ուր կերթայ նս.
Խչու մինչեւ ճաշ
Տունը չի դառնար:

(ՀԱՅՐԱԼ)

Աչքիս լոյս, Եղբայրդ
Ամէն առաւօտ
Կանովսկեկ դպրոց
Կը վազէ կ'երթայ,
Եւ մինչեւ ՚ի ճաշ
Այս տեղ կը մնայ:
Խելօք մարդ լինին:

Հոն կ'երթան նոյնպէս
Եւ միւս մանուկներ,
Նորա ընկերներ:
Նոքա հոն կ'երթան,
Որ ուսում սովորին
Եւ յետոյ բարի,



ՍԱԳՆ ՈՒ ԲԱԴԱԼ

Սագն ու Բագը դնացին Ծին եղերքը որ թէ քիչ
մը լուացուին և թէ քիչ մ'ալ ուտելու բան գտնեն:
Լուացուեցան, մաքրուեցան, յետոյ ետ դարձան և
սկսան իրարու հետ խօսակցիլ:

— « Բաղդիկ, ըստ Սագը, կը տեսնես ի՞նչ չնորհ-
հալի թռչուն եմ ես. Ջրոյ մէջ կը լուացուիմ, օդին մէջ
կը թռչիմ, գետնի վրայ ալ ման կուգամ: Ըսէ, խընդ-
րեմ, ինձ նման կենդանի մ'ալ կայ աշխարհիս մէջ. Ես
բոլոր թռչուններու իշխանը չ'եմ: »

— Ես ալ ճիշտ ատոր վրայ կը մոտածէի, ընկերս,
պատասխանեց Բագը. ստոյդ է թէ գուն շատ չնորհալի
թռչուն մ'ես, բայց ես ալ քեզմէ վար չեմ մնար: Տես
թէ ի՞նչպէս կը սուրամ ջրին երեսը, կը խաղամ վրավ-
րուն ալիքներու հետ: Ի՞նչպէս կը մտնեմ ջրին տակը,
մանրիկ ձուկեր և ճճիներ կը բռնեմ, նորէն դուրս կու-
դամ, կ'ուռիմ կը փանամ իշխանուհոյ մը պէս: Հա-
յա, ընկերդ իմ, մենք շատ սքանչելի թռչուններ ենք:
Մեզ նման չնորհքով կենդանի չ'կայ աշխարհիս մէջ: »
Մեզ իջին եղերքը, ծառի մը վրայ կեցած մտիկ կ'ընէր

Աղուան անոնց խօսքերը : Երբոր Բադը իւր խօսքն աշարտեց, Աղուան սկսաւ պոռալ . — « Այ անմիտ թըռչուններ, ի՞նչ բանի համար կը հպարտանաք : » Կրնաս դու, Սագ, շան պէս արագ վազել :

— Աչ, պատախանեց Սագը :

— Իսկ դու, Բադիկ, կրնաս ծիծեռնակին պէս թռչիլ :

— Զեմ կրնար, ըստաւ Բադը :

— Իսկ ձենէ որմէնիդ կրնայ ձկան պէս լողալ : »

Սագն ու Բադը վար կախեցին գլուխնին :

— « Ուրեմն ինչո՞ւ կը հպարտանաք : Ընկերներ, ես կը կարծեմ թէ լաւագոյն է որ մարդ մը միայն մէկ բան գիտնայ հիմնական կերպով, քան թէ շատ բաներ թերի կերպով : »

Ո Զ Ն Ի

Աստուած ամէն անաստուններուն միջոց է տուեր իրենց անձը պաշտպանելու, Գաղանները ունին իրենց ժանիքները, ընտանի կենդանիք զօրաւոր եղջիւրներ, իսկ փոքրիկ ողնին ասեղնաձև փուշեր որք կը ծածկեն իւր մարմինը :

Անօթի Գայլը դաշտին մէջ կը թափառէր օրին մէկը և ուտելիք կը վնասուէր . յանկարծ տեսաւ փոքրիկ կենդանի մը որ կամաց կամաց առաջ կուգար . սա վշտ Ողնին էր : Գայլը անոր քովը վազեց : Ողնին ժողվեց իւր մարմինը, կծկուցաւ և տնկեց իւր փուշերը : Գայլը նեղը մնաց . մտածեց նա գէմթ խորամանկութեամբ յաշողեցնել իր գործը . « Սիրուն Ողնի, ըստա նա, այդ ի՞նչ գեղեցիկ կենդանի ես . ի՞նչ սիրունիկ ոտիկներ, ի՞նչ

նազելի դունչ ունիս : Ական միայն որ զգեստդ փշոտ է : Լաւ չը լինիր, լնկեր, որ դէմթ փորդ այդ անպիտան փուշերով չը ծածկես : »

Ողնին քթին ծայլը գուրա հանեց և ըստաւ . « Հանգիստ թող զիս, Գայլ, գովասանքիդ կարօտ չ'եմ : Փառք կուտամ Աստուածոյ որ մարմինս ծածկեր է փուշերով . եթէ այս փուշերը չըլլային, հիմա դու ուրիշ լեզով կը խօսէիր հետու : »



ՏԵՐՈՒՆ ԱԿԱՆ Ա. Դ. Թ. Ք.

Հայր մեր որ յերկինս ես, սուլբ եղիցի անուն քո : Եկեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի : Զհաց մեր հանապազօր՝ տուր մեղ այսօր և թող մեղ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի տանիր զմեղ 'ի փորձութիւն, այլ փրկեա զմեղ 'ի չարէն, զի քո է արքայութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս . ամէն :

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ ՄԷջ)

brik

- 37 — 1. Փետուրէ գրիչ : — 2. Հոլ (բզզան, թօպաճ) :
- 39 — 1. Զու : — 2. Զուր, գետ :
- 42 — 1. Մեղք : — 2. Կառքին անիւները :
- 46 — 1. Հրացան : — 2. Թուր, դաշոյն :
- 48 — 1. Սեղան : — 2. Հեշտաեռ (Սամավար) :
- 52 — 1. Կող : — 2. Փիղ : — 3. Կրիայ :
- 56 — 1. Թուզ : — 2. Ցորեն : — 3. Նուշ :
- 59 — 1. Ռոկի եւ արծաթ : — 2. Բոկի :
- 62 — 1. Բերան, ականջներ, աչքեր : — 2. Քիթ :
- 68 — 1. Բերան եւ ատամներ : — 2. Զեմներու եւ սո-
ներու մատները :
- 72 — Կարգալ, գրել, ուսում :
- 75 — Մարդս մանկական, այրական եւ զառամեալ հասակ-
ներու մէջ :
- 78 — Արեգակ :
- 83 — Ամիսներն, եղանակներն, չաբաթներն, օրերն, գիշեր
ու ցերեկ :
- 86 — Ճրագ եւ ճրագակալ :



4535

2013

«Ազգային գրադարան»



NL0062825

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ՀԱՅՈՑ ՄԻԱՑՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ (Ն. Տ. Դեւնդեան) Ա. Տարի .	10-
ասաներող ապագութիւն (43 պատկեռով)	3 Դր
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ (Ն. Տ. Դեւնդեան) Բ. Տարի , Երե-	
ասաներող ապագութիւն (66 պատկեռով)	5
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ (Ն. Տ. Դեւնդեան) Գ. Տարի , Ա-	
բնորդ ապագութիւն (80 պատկեռով)	5
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ (Ն. Տ. Դեւնդեան) Դ. Տարի ,	
Հիմքերոց ապագութիւն (20 պատկեռով)	5
ԹՌԱՅԱԿԱՆԻԹԻՒՆ (Պատկերազարդ)	5
ՔՌԱՍՑՈՒՆԿԱՆ (Մարկոսան), Յօրդ Տապագութիւն	60
ՔՆՐԱԿԱՆԻԹԻՒՆ ԱՅսահարուր լեզուի (Թ. Թեր-	
գեան), Երկրող ապագութիւն (Սոյունդ)	
ԳՆՐԱԿԱՆ. ՏԵՏՐԻ (Յ. Վասիլեան), 4 տերերու մէջ	
ամփայիսար : Գիշ մէկ տերի	30
Գին 100 տերերու	50
ԴՊՐՈՑԱԿԱՆ. ՊԱՏԿԵՐԱԳՈՒՄ. Տերեր (Սոյունդ)	

Բառական թառով զնողաց դոհացուցիւ զեղչ կը
Կը դանուի ամեն գրամաճառաց քով :

ԿԵՂՋԱԿԱՐԵԿՈՂԻՆ Է

Հայոց Միացեալ Անկերութեանց դրասենեակն
Պալարիս . Ա. Լուսաւորիչ և կեղեցի :

Հայոց Միացեալ Անկերութեանց կնիքը Հկող որ
ներն անվարել են :

Միեւնայն գրասենեկին մէջ կը վաճառուին նաև
զիսութիւն (Տօք. Առժիքի) եւ նախական Ծիրեցար
Թէղնանի), ուն սպած պարանձնառու :